ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1955 Общественные науки

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Վ. Թեմուրճյան

ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԴԵՊԻ ԳԱՄԻՐՔ

[11-րդ դարում]

Հայ նորագույն պատմագրության մեջ Գամիրքի և նրա ազգաբնակչության մասին, և հատկապես 11-րդ դարի ընթացքում, Վասպուրականից, Անիից և Կարսից՝ Բագրատունիների և Արծրունիների Գամիրք գաղթի մասին կան կըցկրաուր տեղեկություններ միայն։ Առհասարակ 11-րդ գարի առաջին քառորդից մինչև 80-ական թվականները, այսինքն՝ Արծրունիների, Բագրատունիների Գամիրք գաղթելու և Ռուբինյանների լեռնային Կիլիկիայում հաստատվելու ժամանակաշրջանը շատ անբավարար է ուսումնասիրված մեր պատմաբանների կողմից։

Ներկա հոդվածով մենք ցանկանում ենք ոչ թե շարադրել այդ շրջանի պատմությունը, այլ կանգ առնել մի շարք կարևոր փաստերի վրա, որոնք կարող են օժանդակել այդ հարցի հետագա՝ ավելի հանգամանալից ուսումնասիրողներին։ Մեր առաջ երեք գլխավոր հարց ենք դրել ա) 11-րդ դարում հայ ֆեոդալների գաղթը Փոքր Հայք և Կիլիկիա ինչպիսի քաղաքականության հետևանք էր, բ) Գամիրքի ո՞ր շրջաններումն է նրանց թույլատրվում հաստատվել և ինչո՞ւ. գ) Գամիրքում հայ ֆեոդալները ինչպիսի՞ փոխհարաբերության մեջ են գտնվել տեղական հույն ֆեոդալների հետ։

Ինչպես հայտնի է, Արշակունիների անկումից հետո մինչև Արծրունիների և Բագրատունիների «գաղթը» դեպի Փոքր Ասիա, տեղի են ունեցել բազմաթիվ մասնակի գաղթեր, առևտրական կամ այլ նկատառումներով, եղել է նաև բռնի կամ հարկադրական գաղթ, օրինակ, 577 թ. ապստամբությունից հետո Վարդան Մամիկոնյանը յուրայիններով հաստատվեց Փոքր Ասիայի Պերգամոն քաղաքում, Հուստինիանոս 2-րդը 688 թ. Հայաստանը նվաճելուց հետո 8 հազար տուն հայերի բռնի տեղափոխեց Փոքր Ասիա և Թրակիա [1]. 726 թ. Պավլիկյանները՝ հայ և արաբ տիրող կարգերի միացյալ ուժերի առաջ պարտվելով, անցան բյուզանդական տերիտորիան և այլն. սակայն այս դաղթերից ոչ մեկը այնպիսի զանգվածային բնույթ չի կրել, ինչպիսին Վասպուրականի Արծրունիների, և մասամբ՝ Անիից և Կարսից Բագրատունիների «գաղթը», որը կատարվեց բյուզանդական կայսր Վասիլ 2-րդի նենգ ծրագրով։ Վասիլ 2-րդի (976—1025) մշակած ծրագիրը հետապնդում էր ոչ միայն Հայաստանը հայերից հիմնովին դատարկելու, այլև նրանց ազգովին ձուլելու նպատակը։

Նախքան Վասիլ 2-րդի քաղաքական ծրագրի վերլուծմանն անցնելը համառոտակի ծանոթանանք Գամիրքի սահմանների հետ։ Միջնադարյան հայ պատմիչները Գամիրք են անվանում Անտիտավրոսյան երկրի այն մասը, որ-

[1] Ստեփանոս Տարոնացի (Ասողիկ), Տիեզերական պատմութիւն, գիրք 2, ՍՊԲ, 1885, էջ 100։

տեղ 7-րդ դարի [մ.թ.ա.] սկիզբները կիմմերները (գամիրները) հաստատել են բնակություն։ Գամրաց աշխարհը համապատասխանում է Կապադովկիայի այն մասին, որի հյուսիս և հյուսիս-արևելյան կողմը, համարյա ամբողջությամբ շրջապատված է Ալյուս գետով (Գզրլ-ըրմագ), Արևելքից՝ սահմանն է Վերին Եփրատը, մինչև հին Մալաթիայի [Մելիտինե] հյուսիսը, Հարավից՝ Թոհմասուն [Մելաս-գետ], Տարենտեի և Կյուրինի [խավատանեքի] գավառակները ներառյալ, իսկ արևմուտքից՝ Պողակլյանից մինչև Արգեոս [Էրճիաս] լեռան ստորոտները։ Այս եռանկյունաձև երկրամասը ընդգրկում է այժմյան Սեբաստիայի (Սվազի) գավառի ինը գավառակներից [Կազա] յոթը, Խարբերդի վիլայեթից՝ Ակն և Արաբկիր քաղաքները՝ իրենց շրջակայքով, ինչպես նաև Կեսարիա (Կայսերի) գավառի հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շրջանները։

Գամիրքի՝ որպես հայ ֆեոդալների բնակության վայրի ընտրությունը, պատահականության արդյունք չէ, այլ արաբական էմիրների արշավանքների դեմ այդ վայրը որպես պլացդարմ օգտագործելու ձգտում։ Հայտնի է, որ արաբներն իրենց հերթին 8—9-րդ դարերում Գամիրքում պավլիկյաններին օգտագործել էին բյուզանդացիների դեմ։ Իրականության չի համապատասխանում մեր պատմագրության մեջ արտահայտված այն կարծիքը, թե Վասիլ 2-րդը «մեղմ» քաղաքականություն է վարել հայերի հանդեպ։ Այսպես է գրում Լեոն, Վասիլը, ըստ երևույթին, հիշելով «իր հայկական ծագումը», հայերի հետ նույնքան անխնա չի վարվել, ինչպես վարվել է բուլղարների հետ [1]։ Ըստ Սրմանյանի «...հայ իշխանները սկսան իրենց երկիրները հոժարությամբ Բյուզանդիո կայսրներուն հանձնել» [2]։ Իրականում Վասիլը նույնքան դաժան է վարվել հայերի նկատմամբ, որքան այլ ժողովուրդների և եթե նա իր վարած քաղաքականության մեջ հանդիպել է դժվարությունների, ապա դա պետք է բացատրել այդ ժամանակաշրջանի տնտեսական և քաղաքական հանգամանքներով։ Եթե Վասիլը ռուսաց մեծ իշխան Վլադիմիրի հետ կապեր հաստատելով կարողացել էր Բալկաններում բուլղարներին կղզիացնել և ճզմել, ապա նրա նվաճողական ծրագրի իրագործումը, Եփրատից մինչև Կովկաս նույն բարենպաստ պայմաններում չէր։ Արաբները, թեև իրենց մասնատվածության պատճառով մեծ վտանգ չէին ներկայացնում, բայց արաբական էմիրները դեռևս կկարողանային նախասիայում հայ, ասորի և այլ մոնոֆիզիտներին, [ինչպես որ արվեց 8—9-րդ դարերի ընթացքում պավլիկյանների ժամանակ] և ըմբոստ զորավարներին օգտագործել բյուզանդական ուժերի դեմ. բ) Այդ ժամանակ աբխազները ապստամբություն էին բարձրացրել. նրանց ճնշելու համար Վասիլը հայ իշխաններից սպասված աջակցությունը չէր գտնում, որովհետև նախասիայում հայ, վրացի և աղվան իշխանների միջև որոշ համերաշխություն էր գոյացել։ Կար մի ուրիշ հանգամանք էլ, որ Վասիլին թելադրում էր զգույշ լինել. այդ՝ ապստամբ զորավար Վարդ Սկլերոսի և Վարդ Փոկասի Փոքր Ասիայում հարուցած խռովություններն էին։ Այսպիսի բարդ պայմաններում ավելի ճիշտ կլիներ ասել, որ Վասիլը որպես բյուզանդական տիրող կարգերի տիպիկ ներկայացուցիչ, իր նվաճողական նպատակների իրագործման համար նախընտրել էր դիվանագիտական ճանապարհը, փոխանակ դիմելու բռնի ուժի։ Այսպես, նա, մի կողմից նենգորեն ծրագրում էր հայերին բյուզան-

[1] Հմմտ. Լեո, Հայոց պատմություն, հատոր 2, Երևան, 1947, էջ 954։
[2] Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա հատոր, կ. Պոլիս, 1912, էջ 1175։

դական երկրների ներսերը տեղափոխել, մյուս կողմից աշխատում էր հույն եկեղեցու միջոցով նրանց հունադավան դարձնել և ձուլել։

Այդ մասին մենք ունենք ուշագրավ վկայություններ։ Ասողիկը գրում է. «Եւ զբռնութիւն ի ձեռն առեալ սկսաւ տանջել զքահանայս վասն հաւատոյ, եւ զՁլխաւոր քահանայս Սեբաստիոյ քաղաքին երկաթեղէն կապանօք հաստուցանէր ի դուռն թագաւորին։ Եւ ի բանտի չարչարեալ զաւագն Երիցանցն զԳաբրիել սպանին, զի էր այր ծեր և իմաստիւք լի և քաջապինդ ի հավատս աստուածեղէնս։ Այս եղև ի նլե [435] թուականին [435—551, —986]։ Իսկ այլք յաննշան քահանայիցն և երկու եպիսկոպոսունք Սեբաստիոյ և Լարիսոյ, Սիոն և Յովհաննէս, ի ձեռն նոյն մետրապոլտին ընկալան զժողովն Քաղկեդոնի, ի բաց կալով ի միաւորութենէն հայոց։ Եւ յայնմհետէ արդելին զժամաձայն Հայոց ի քաղաքէն Սեբաստիոյ մինչև ցգալ թագաւորին Վասլի յաշխարհն արևելից, զոր յիւրում տեղւոջն ասասցուք»[1]։

Այս վկայություններից երևում է, որ 986 թ. հայերին թեև արտոնվել էր Գամիրքի երկու քաղաքներում՝ Սեբաստիայում և Լարիսայում իրենց եպիսկոպոսություններն ունենալու, սակայն հույն մետրոպոլիտի կողմից (անշուշտ կայսրի գիտությամբ) նույնիսկ հայոց եկեղեցիներում արգելվել էր զանգահարությունը։

999 թ. հունիսին, երբ Վասիլը Տրապիզոն գնալու համար անցնում է Սեբաստիայից, հայ քահանաները նրան խնդրանք ներկայացնելով, վերստին իրավունք են ձեռք բերում զանգահարության։

Վասիլը Տրապիզոն էր գնում Տայքի Դավիթ Կյուրապաղատի կտակի համաձայն՝ նրա կալվածքները ձեռք բերելու։ Այդ ժառանգության գրավումով նա սկիզբ է դնում բյուզանդական այն հին ծրագրի իրագործման, թե Հայաստանում պետք է ոչնչացնել տեղական բոլոր հայ իշխանությունները։ Տրապիզոնը դառնում է այն վայրը, որտեղ խմորվում են քաղաքական այդ սակարկությունները, որոնք վերջ տվին Արծրունիների ու Բագրատունիների թագավորություններին։

Հայ պատմագրության մեջ տիրապետող է այն կարծիքը, թե Սենեքերիմ Արծրունին Սելջուկյան արշավանքներից վախենալով, իր որդու՝ Դավթի միջոցով Վասիլից խնդրում է Վասպուրականը փոխանակել Սեբաստիայի հետ։ Դա չի համապատասխանում ո՛չ պատմական իրականության և ո՛չ էլ ժամանակագրության։ Պատմական դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 11-րդ դարի առաջին քառորդի սկզբներին սելջուկները դեռևս մեծ վտանգ չէին ներկայացնում։ Ատրպատականի Դեյլեմ ցեղի և Միջին Ասիայից թափանցող թյուրք և թյուրքմեն ցեղապետերի սովորական ասպատակությունները Վասպուրականը թողնելու չափ վտանգ չէին ներկայացնում։ Ինչ վերաբերում է Մատթեոս Ուռհայեցու այն հավաստիացմանը, թե Սենեքերիմ Արծրունու որդին՝ Դավիթը Վասպուրականի փոխանակության համար մեծ նվերներով Կոստանդնուպոլիս է գնացել և արժանացել է Վասիլի սիրալիր ընդունելությանը, նույնպես ճիշտ չէ, որովհետև, ըստ պատմական փաստերի, Վասիլը 1020-ական թթ. դեռևս գտնվում էր Վրաստանում և պատերազմում էր վիրա-աբխազական թագավորության հետ։ Նա, բուլղարների հետ հաշիվը մաքրելուց հետո

[1] Ասողիկ, Տիեզերական պատմութիւն, ս. Պետերբուրգ, 1885 թ., գիրք Ա, գլուխ Ի, էջ 201—2։

միայն կարողացավ զբաղվել հայերի հարցով և 1017 թ. հետո սկսեց ձեռնամուխ լինել իր, վաղեմի ծրագրի կենսագործմանը, ոչնչացնել հայ և վրաց պետական կազմակերպությունները։ Այս կապակցությամբ է, որ կայսրը 1020 թ. իր մոտ Տրապիզոն է հրավիրում Սենեքերիմի որդի Դավթին՝ Վասպուրականը Սեբաստիայի հետ փոխանակելու պայմանների մասին «բանակցելու» համար։

Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունին իր երկիրը թողնում է հակառակ իր կամքին. սրա, որպես փաստ, կարելի է հիշատակել այն, որ Սենեքերիմ Արծրունին իր կտակում հիշատակում է, որ իր մահից հետո, իր մարմինը փոխադրեն Վանի ս. Նշան Վարագա վանքը։ Համենայն դեպս, բյուզանդական կայսրությունը ստանում է 72 բերդ, 3 քաղաք, 400 գյուղ և 115 վանք, դրանց փոխարեն տալով Սեբաստիան իր մերձակա 2 քաղաքներով՝ Լարիսա և Ավարա կամ Ամարա։ Սենեքերիմը իր 40,000 հետևորդներով գաղթում է Վասպուրականից Սեբաստիա, ինքը իր զավակներով տեղափոխվում է հենց Սեբաստիա քաղաքը, իսկ իր եղբոր որդիներից հավանաբար Դերենիկը և Աշոտը Սեբաստիայից դեպի հարավ-արևելք կառուցում են Մարն-տունիկը, Արարկիր և Աշոտի ավանները, իսկ Գագիկի որդի Գուրգենը տեղավորվում է Կամարակի մոտ Մուտառասունում (տե՛ս հաջորդ էջում Գամիրքի քարտեզը)։

Հայ հին և նոր պատմաբանների մոտ նկատվող տարակարծությունը գաղթողների թվի ու Սենեքերիմի ստացած վայրերի մասին, առաջ է գալիս մի քանի հանգամանքներից. 1. մեր միջնադարյան պատմագիրները զանազանություն չեն դրել Սենեքերիմի ստացած ժառանգական կալվածքների և, որպես Կապադովկիայի կուսակալ նրա տրամադրության տակ դրված հողերի միջև, իսկ օտար պատմագիրներից ոմանք հիշատակել են և՛ մեկը և՛ մյուսը։ Օրինակ՝ շատերի համար անծանոթ է եղել Մուտառասունում մի ավատատերի՝ Գուրգենի որդի Գագիկի գոյությունը, որի մասին խոսում է Ուռհայեցին, երբ գրում է «...եւ տէր Գրիգորիսն եկեալ բնակեցաւ ի Մուտառասուն առ Գագիկ որդի Գուրգենայ»[1], մինչդեռ Մուտառասունի վայրը և Գուրգենի որդի Գագիկ ավատատերի գոյությունը անծանոթ է ինչպես Օրմանյանին, այնպես էլ ուրիշներին։ Այս մասին Օրմանյանը գրում է. «...բայց դժբախտաբար ոչ ցուցված տեղը ծանոթ է, և ոչ Գագիկ Գուրգենյան մը կճանաչվի, կաթողիկոսին հովանավոր ըլլալու կարող»[2]։ Եթե նկատի ունենանք Սենեքերիմի՝ Կապադովկիայի կուսակալ լինելու հանգամանքը, որ պարզապես հիշատակված է Կեդրենոսի կողմից, թե հույները Սենեքերիմին Պատրիկ և Զորավար Կապադովկիայի էին անվանում[3], ապա հասկանալի կարող է դառնալ այդ հարցը, քանի որ Սենեքերիմը՝ որպես կուսակալ կարող է իր իշխանության սահմաններում տեղավորել փոքր վասալներ, ինչպես իր եղբորորդիներին՝ Դերենիկին, Գագիկին և Աշոտին։ Հավանաբար այս պատճառով է, որ հայերը Սենեքերիմին «թագավոր» են անվանում, քանի որ նա իր իշխանության տակ դրված հողերում ունեցել է իրեն ենթակա վասալներ։ Իսկ ինչ վերաբերում է Գուրգենի որդի Գագիկին, ապա վերջինս հայտնի է Վարդան պատմիչի հետևյալ հիշատակությամբ. «Վասպուրականի թագաւորքն յազգէն Սենեքերիմայ, Գագիկ որդի Դերենեկանն, սա շինեաց զԱխթամար. ապա Դերենիկ որդի նո-

[1] Մ. Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, տպ. Վաղարշապատ, 1898, էջ 206։

[2] Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա հատոր, Կ. Պոլիս, 1912, էջ 1288։

[3] Theophanis continuatus, cedrenus, Corpus scriptorum, Historiae, Buzantinae, Bonnae, 1838, page 464.

րա Աբուսահլ, և յետ նորա Շահնշահ՝ որդի նորա. և զկնի եղբայր իւր Գուրդեն. և ապա եղբայր իւր Սենեքերիմ, որ նեղեալ ի Պարսից՝ ետ զերկիր իւր ի Վասիլն, եւ չոգաւ առ նա չորս որդւովք, որոնց անուանքն՝ Դավիթ և Աբուսահլ, Ատոմ և Կոստանդին, և եղբօրորդիքն՝ Դերենիկ, Գագիկ և Աշոտ և առնու փոխան զՍևաստ և զԼարիս, և յոլով պրաստինս»[1]։

Վարգանի վերոհիշյալ հիշատակությունից հաստատվում է, որ Գագիկը էղել է Սենեքերիմի եղբոր՝ Գուրգենի որդին. և, հետևաբար, որպես ավատ ստացել է Մուտառասունը, որի մոտ 1070-ական թվականներին ապաստանում է Գրիգորիս Վկայասեր կաթողիկոսը։ Մուտառասունը գտնվում է այնպիսի մի վայրում[2]. որի շրջակայքում մինչև 18-րդ դարի սկզբները դեռևս կային բազմաթիվ հայ գյուղեր, ինչպես Կոմյուրեն Գամիրքան, խնձորի պատմական հայ գյուղերը, այ՝ վերջինը գտնվում է Մուտառասունից 6 կլմ. հեռու։

Համաձայն պատմական տվյալների՝ մենք ենթադրում ենք, որ Սենեքերիմի եղբորորդիներից Դերենիկը և Աշոտը, որպես ավատ պետք է ստացած լինեն Սեբաստիայից դեպի հարավ-արևելք գտնվող ջրարբի հողերը, որտեղ կառուցում են Մայր-ընտանիք (Մարընտունիկ) Արաբկիր և Աշոտի ավանները, իսկ հետագայում Անիից, Կարսից եկած գաղթականությունը կառուցում է բազմաթիվ հայ գյուղեր՝ Աբեղանոց, Ագրակ, Բազմաշէն, Ապրանք, Փշատի, Ուռեկ, Միջին գյուղ, Պարտիզակ, Արտոնս, Հեղետար, Խասկալ, Մեծ և Փոքր Վարդենիք, Փետրական, Խնձոր, Սերկևիլ, Տանձիկ, Կծու, Դրնիկ, Վանկուկ, Գաննար, Պարաձոր, Հացտեսի, Աշոտկա, Բակեր, Ջար Գլակ և այլն։ Սրանց բնակիչներից ոմանք Ջելալիների (17-րդ դար) ասպատակումների ժամանակ կաղթում են, իսկ մնացածները բռնի իսլամացվում։

Ինչպես հիշյալ գյուղերի, նույնպես և Աշոտի գյուղաքաղաքի անունները ստուգաբանության հարկ չեն զգում։ Աշոտի և Աշոտկա շատ հավանական է, որ կառուցված լինեն հենց Սենեքերիմի եղբորորդի Աշոտի կողմից և կամ նրա հիշատակին։

Արաբկիր անունը, տեղացի հայերը կապում են Արաբկիր քաղաքի մեջտեղից անցնող «Ժամու չայի» հետ. այսպես. Առ-ափ-կեր, այսինքն՝ առվի ափին կառուցված։ Մենք ենթադրում ենք, որ դա որևէ գիտական հիմք չունի, այլ ժողովրդական ստուգաբանություն է, քանի որ որևէ գրավոր աղբյուր գոյություն չունի այդ մասին, իսկ ինչ վերաբերում է «Մարընտունիկին» ըստ երևույթին, աղավաղված մի ձևն է մայր-ընտանիքին։ Հետագայում Մարընտունիկը Անիից, Կարսից և այլ տեղերից եկած գաղթականություններով մեծանալով հասնում է մինչև «Քարանձավ դղեակն՝ Ակն կոչեցեալ», որի հետևանքով Մարընտունիկը կոչվում է Ակն կամ թուրքերեն Էկին։ Այս մասին կան որոշ փաստաթղթեր՝ տրված Օսմանյան թագավորների կողմից, որտեղ Ակնի վայրը հիշատակվում է, «Մարընտունիկ գազասը» անվան տակ։ Այս բոլորը հաստատում են, որ Արծրունիների իշխանական տոհմի մի գլխավոր շառավիղը հաստատվել է այդ վայրերում[3]։

Սենեքերիմի հետ գաղթող մարդկանց թվի մասին ևս գոյություն ունեն տարբեր կարծիքներ։ Ոմանք գաղթողների թիվը բարձրացնում են մինչև 400

---

[1] Վարդան. Պատմութիւն տիեզերական, Վենետիկ, 1862, էջ 92։

[2] Մուտառասունը այժմ թյուրքմենական մի փոքր գյուղ է և գտնվում է Կեմերեկից 13 կլմ. հեռավորության վրա, դեպի Բունարբաշի [Ազիգիե] տանող ճանապարհին։

[3] Բեչյան. Ակն և Ակնցին, հատոր Ա, տպ. Պուրբեչ, 1943, էջ 12—13։

հազարի։ Մենք, նկատի ունենալով Վասպուրականի բնակչության թիվը և հայերի ձեռքին մնացած վանքերի թիվը, ճիշտ ենք համարում Թովմա Արծրունու տված տեղեկությունը, թե՝ «Սենեքերիմ ի թուին Հայկազնեան տումարին ՆՀ [1021 թ.], և դէմ եդեալ գնացին յաշխարհն Յունաց ԺԴՌ [14,000] արամբք, թող զկանայս և զմանկտիս»[1]. այսինքն՝ չհաշված կանանց և երեխաներին, այր մարդիկ միայն կազմում են 14,000 հոգի, կանայք և երեխաները միասին հաշված Վասպուրականից մոտավորապես 40 հազար հոգի գաղթել են Սեբաստիայի գավառը։

Բյուզանդական Կոստանդին Մոնոմախ կայսեր հաջողվում է 1044 թ. Գագիկին խաբեբայությամբ Կ. Պոլիս հրավիրել և Անին գրավել։ Անիի փոխարեն Գագիկին տրվում է հողեր՝ Կապագովկիայում, Խարսիանեսում, Լիկանդոսում, Կալոնպազատում և Պիզուում[2]։ Թեև սրանով հնարավոր չէ որոշ գաղափար կազմել այդ հողերի ճշգրիտ տեղադրության մասին, բայց, միջնադարյան հայ պատմագրերի տվյալներից ելնելով, կարելի է հաստատապես ասել, որ դրանք գտնվում էին միևնույն վայրում՝ Գամրաց աշխարհում։

Հայ պատմագրության մեջ Պիզուի վայրի մասին թեր ու դեմ բազմաթիվ կարծիքներ կան։ Հակառակ այն բանին, որ 11-րդ դարից նրա մասին բազմաթիվ հիշատակություններ կան, որպես քաղաք նրա վայրը մինչև այժմ չի որոշված։ Հայտնի է միայն, որ Պիզուն իր մերձակա Կալոնպազատ դղյակով եղել է Գագիկի գլխավոր ոստանը։ Հայ և օտար պատմագիրները Պիզուի վայրը դնում են Տավրոսյան լեռների մեջ, Կեսարիայի արևելյան կողմը, Ծամընդավ կամ այժմյան Զամանթի գետի մոտերքում։ Մենք հավանական ենք համարում այդ ենթադրությունը, որովհետև Գամիրքի այդ շրջանում կան 60—70 չափ մեծ մասամբ հայաբնակ գյուղեր, որ կոչվում են Բոզուկի գյուղեր։ Ըստ Տ. Պալյանի, Պիզուն նախ եղել է Բիզուկ և ապա ժողովրդական լեզվի մեջ աղավաղվելով, դարձել է Բոզուկ[3]։

Աբբասի որդի Գագիկը ևս 1065 թ. ստիպված է լինում Կարսի իր փոքրիկ թագավորության հողերը թողնել բյուզանդական կայսրության և դրանց փոխարեն ստանալ Ծամնդավը (Զամանթը)։ Այսպես, Վասիլ 2-րդը և իր հաջորդները, 40 տարվա ընթացքում գլուխ են բերում հայերի դիմադրական ուժը չլատելու՝ Հուստինիանոսյան վաղեմի ծրագիրը։

Կարսի թագավոր Գագիկի ստացած հողերի մասին ևս, միջնադարյան հեղինակների մոտ կան տարակարծություններ։ Օրինակ՝ Մ. Ուռհայեցին գրում է. «Թողեալ Գագիկ զԿարս և գնաց ի Հոռոմս. և թագաւորն Տուկիծ տայր նմա զԾամնդաւ. և անդ եկեալ Գագիկ ազատօք իւրովք և թողեալ զտունն հայրենեաց իւրոց»[4]։

Սմբատը սրա վրա ավելացնում է Կեսարիան և Խավատանեքը [Կյուրունը]. իսկ Վարդանը՝ 100 գյուղ ավելացնելով, հիշատակում է նաև 4 քաղաքների անունները՝ Ծամնդավ, Լարիսա, Ամասիա, և Կոմանա, այստեղ Ամասիայի հիշատակումը Վարդանի պատմության ընդօրինակությունից առաջացած մի սխալ ենք համարում։ Նկատի ունենալով Ծամնդավից մինչև Ամասիայի մեջ ընկած տարածության ընդարձակությունը, անհավանական ենք համարում.

[1] Թ. Ուռհայեցի. Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 500։
[2] Schlumberger, L'Epopee Byzantine, Tome III, Paris, page 489.
[3] Տ. Պալեան. Հայ Վանորայք, էջ 125—126։
[4] Մ. Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 151։

որ բյուզանդական կայսրությունը, Ամասիայի նման սահմանագլխից հեռու և մեծամասնությամբ հույն բնակչություն ունեցող մի քաղաք թողներ Գագիկ թագավորին։ Երկրորդ՝ Անի քաղաքը սելջուկների կողմից գրավվելուց հետո, Կարսը գտնվում էր արտաքին հարձակվողների սպառնալիքի տակ, ուստի Գագիկը հարկադրված էր թողնել իր թագավորությունը, հետևաբար և բնակավայրի ընտրության խնդիր չէր կարող գնել։ Երրորդ՝ պատմականորեն ճիշտ է նաև, որ Փոքր Ասիայում գոյություն է ունեցել երկու կոմանա, մեկը՝ Կոմանա Պոնտոսի, (այժմյան Թոգաթի մոտ Կյումենեկ կոչված գյուղի մոտ), մյուսը՝ Կոմանա Կապադովկիա, որի ավերակները գտնվում են Հաճընի և Կոկիսոնի (Գյոք-սու) միջև. հենց Շարդերե (Սարդերե) կոչված վայրում։ Եթե ընդունենք, որ Վարդանի հիշատակած Կոմանան, Կապադովկիայի Կոմանան է, ինչ որ շատ հավանական է. այն ժամանակ 4 քաղաքներից երեքը՝ Ծամնդավ, Լարիսա, (Վիրէն Շեհիր) Կոմանա ամփոփում են Ուզունյայլայի միևնույն շրջանակի մեջ։ Իսկ Ամասիայի հիշատակությունը, ինչպես ճիշտ ենթադրում է Ա. Ալբոյաջյանը, առաջացել է Ամարայի կամ Ավարայի սխալ ընթերցումից։ Ամարան (Amara), ինչպես հայտնի է, գոյություն է ունեցել Գամիրքում, քանի որ հիշատակվում է թեոֆանեսի շարունակողի մոտ, որպես Պավլիկյանների կառուցած քաղաքներից մեկը [1]։

Այսպես, Վասպուրականի, Անիի և Կարսի հայ իշխաններին թույլատրվում է հաստատվել Անտիտավրոսյան երկրի այն հողերում, որոնք արար էմիրների կողմից ենթակա էին մշտական հարձակման։

Գամիրքը 11-րդ դարում գրեթե ամբողջությամբ բնակեցված էր հայերից, այնպես որ 1099 թ., երբ խաչակիրները Փոքր Ասիայի Հերակլե (այժմյան Երեգլի) քաղաքից անցնում են Կեսարիայի շրջանները, տեսնում են, որ այդ վայրերի բնակչությունը մեծ մասամբ հայեր են, որի պատճառով այդ երկիրը նրանք անվանում են «Hermoniorum terra» («Հերմոնիորում տերրա»), այսինքն՝ Հայկական երկիր [2]։

Բյուզանդական կայսրությանը թեև հաջողվում է նենգությամբ Հայաստանը մասամբ, գատարկել հայերից, բայց չի հաջողվում 11-րդ դարում Գամիրքում տեղափոխված հայերին ամբողջությամբ հունադավան դարձնել։ Թեև հույն մետրապոլիտը խղճի ազատության դեմ զանազան արգելքներ է հարուցում, հայ եկեղեցիներում արգելում է զանգահարությունը, հայկական ծիսակատարությունը, սակայն նրան չի հաջողվում Սեբաստիայում և Լարիսայում հաստատված (985) հայ եպիսկոպոսությունները ջնջել։

Շահագրգռված լինելով իր արևելյան՝ սահմանամերձ վայրերում ամուր պատնեշ ունենալ թյուրք-սելջուկների արշավանքների դեմ, բյուզանդական կառավարությունը ձգտում է Անտիտավրոսյան լեռների շրջանում հաստատված հայությունը ձուլել հույների հետ։ Բյուզանդական կայսրությունը իր քաղաքական նպատակների լրիվ իրագործման համար, սկզբից և եթ կրոնական քողի տակ, հունական պատրիարքարանի միջոցով, ներկայացնում էր առհասարակ 9 կետերից բաղկացած առաջարկությունների մի ցուցակ։ Ըստ արտաքին երևույթի դա հայ և հույն երկու եկեղեցիների միասնության մի «ան-

[1] Theophanis continuatus, Corpus Scriptorum Historiae Byzantinae. Bonnae, 1848. p. 166.

[2] Etienne de Blois, „Lettres", 2. Hep. 150. և Laurent, „Byzance et les Turcs", Paris, page 71.

մեղ» առաջարկ էր. բայց ըստ էության կրոնական քողի տակ հայ ժողովրդին ձուլելու բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականությունն էր։ Այդ առաջարկների 4-րդ և 9-րդ կետերի քննարկումից բացահայտ երևում է հետապնդված բուն նպատակը. օրինակ՝ 4-րդ կետում ասված է 1. Աստվածահայտնության տոները հույների հետ կատարել, ավետումը՝ մարտի 25-ին, ծնունդը դեկտեմբերի 25-ին, մկրտությունը հունվարի 6-ին, Տյառընդառաջը փետրվարի 2-ին և այլն. իսկ 9-րդ կետում՝ «կաթողիկոսների ընտրությունը Բյուզանդական կայսրների հավանության ենթարկել»[1]։ Հայերի կողմից վերոհիշյալ 2 կետերի ընդունումը այն ժամանակվա պայմաններում, նշանակում էր աստիճանական ձուլում։



Գամիրքի քարտեզը

Կազմեց՝ Վ. Թեմուրճյան, գծագրեց՝ Ա. Պատրիկ

Տասնյակ հազարավոր հայեր նրանից առաջ Փոքր Ասիայում նույն ձևով ձուլվել էին. դրան, որպես կենդանի ապացույց, կարող են ծառայել Ակնա շրջակայքում հոռոմ հայերի այն 6 գյուղերը՝ Վան, Զորակ, Շրգու, Մուշեղկա, Հողուս և Մամսա, որոնք հայ ժողովրդի հետ արդեն վաղուց խզել էին իրենց կապերը։

Բյուզանդական կայսրությունը, հանձինս հունադավան հայերի, փնտրում էր հելու կամակատարներ. հույն եկեղեցին նոր ծուխերով իր եկամուտի աղ-

[1] Ա. Դալենցերյան, Միության հարց և Շնորհալի, Մարգվան, 1910, էջ 51։

բյուրներն էր ավելացնում, իսկ հույն կալվածատերերը ավելացնում էին ճորտերի՝ պարիկոսների թիվը։ Ահա թե ինչու հայ և հույն ֆեոդալների միջև մրցվող պայքարը այնքան սուր բնույթ էր ընդունում։ Ատելությունը հայ «լուսավորչականների» հանդեպ՝ այն բանին էր հասնում, որ Կեսարիայի հույն մետրոպոլիտը իր շան անունը դրել էր Արմեն։ Գագիկը այդ անարգանքի համար հույն մետրոպոլիտին տանջալից մահվան է ենթարկում և ունեցվածքը գրավում։

Գամիրքում հաստատված հայերը Ուզուն-յայլայի արոտավայրերում գլխավորապես զբաղվում էին ձիաբուծությամբ, տնայնագործական արհեստներով՝ շալագործությամբ, կավագործությամբ, որոնք զարգացած էին հատկապես Արաբկիրում և Կյուրունում։ Սեբաստիայի, Կեսարիայի վաճառականները լայն հնարավորություններ ունեին իրենց ապրանքները կարավաններով դեպի Միջերկրական ծովի նավահանգիստները տանելու, քանի որ նրանց ձեռքին էր գտնվում Կիլիկիա, Սուրիա տանող Անտիտավրոսյան կիրճերը, Կիլիկիա, Սյուրիա տանող՝ Սեբաստիա-Կապանի և Կեսարիա — Անաբարզա ճանապարհները։ Մյուս կողմից՝ երկրի ներսերից և ծովեզրյա երկրներից եկող կարավանները հարկադրված էին հայ իշխաններին որոշ տուրք վճարելու։ Հայ ֆեոդալները, այսպիսով, Վասպուրականի, Շիրակի և Վանանդի դաշտերը կորցնելուց հետո Գամիրքում ստեղծում են տնտեսական զարգացման նոր նախադրյալներ և աշխատում են ամեն կերպ ամրացնել դրանք։ Այս պայմաններում, անշուշտ, թե՛ հայ և թե՛ հույն ֆեոդալների միջև հարաբերությունները սուր բնույթ պետք է ստանային։ Եվ, իրոք, Գագիկի հիշյալ դեպքից հետո, հույները նրան հետապնդում են և մի օր՝ 1079 թ., երբ Գագիկ Բագրատունին Տարոն քաղաքից վերադառնում է Պիզու, Կիզիստրիայի բերդատեր հույն Մանղալյան եղբայրները նենգությամբ նրան ձիուց ցած իջեցնելով խեղդամահ են անում։ Ատոմը, Աբուսահլը, Աբբասի որդի Գագիկը ևս այդ նույն թվականներին անհայտ կորչում են։

Գամիրքի հայ աղգաբնակչությունը, հակառակ բազմապիսի հալածանքներին ու սպառնալիքներին, 1080 թ. Ռուբենի գլխավորությամբ կարողանում է հույներից գրավել Գամիրքի սահմանում՝ լեռնային Կիլիկիայում գտնվող Վահկա բերդը և հիմք դնել մի ինքնավար մարգի։ Այսպիսով, բյուզանդացիների հաշիվները սխալ են դուրս գալիս։ Մինչդեռ նրանք հայերին Գամիրք փոխադրելով ցանկանում էին նրանց արաբների դեմ օգտագործել իբրև պատվար, հայերը Կիլիկյան իշխանության հիմքն են դնում այնպիսի մի վայրում, որտեղից պետք է անցնեին բոլոր առևտրական կարավանները. հետևաբար, հենց դրանով արգելք են հանդիսանում բյուզանդական կայսրության տնտեսական շահերին։

Գամիրքը հանդիսանում է այն վայրը, որտեղ խմորվում են Կիլիկյան իշխանության առաջին սաղմերը։